ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 131Ա

ՈՒՌԵՆՈՒ ԾԱՌԸ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, գետաբերանին գտնվող ուռենու ծառը տարիների ընթացքում չորացել, բաժանվել է երկու մասի և վայր ընկնելու դեպքում կարող է փակել գետակի հունը ու էրոզիայի ենթարկել ափամերձ տարածքը: Բացասական հետևանքներից խուսափելու համար, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հատել Արտաբույնք գյուղի տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, գետաբերանին գտնվող վերոնշյալ ուռենու ծառը:

2. Հատված ուռենու ծառը որպես վառելափայտ անհատույց հատկացնել Արտաբույնք գյուղի սոցիալապես անապահով բնակիչներ Մամաշ և Խանում Կիրակոսի Մարգարյաններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՍՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

20<u>25</u> թ. _____
Եղեգիս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 132 Ա

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 10102REGB3S2 քաղվածքը, ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ4/0099/02/24 քաղաքացիական գործով 14.03.2025թ. վճիռը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, Հերմոն գյուղի բնակիչ Կարեն Գրիգորի Մարտիրոսյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0001-0019, մակերեսը 0,081հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հերմոն գյուղ, 8-րդ փողոց, տուն 14 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 16 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 133 Ա

03-Ը ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 127Ա ՈՐՈՇՄԱՆ ՀՂՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 03-ը հունիսի 2025 թվականի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ հայտարարելու մասին» թիվ 127Ա որոշման հղման մեջ «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով» բառերը և թվերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով» բառերով և թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԱԲՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 17 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 134 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 09-ը հունիսի 2025թ. արձանագրությունը հողամասի՝ աճուրդով վաճառքի արդյունքների մասին, Եղեգիս համայնքի ավագանու 20/12/2024թ. թիվ 139Ա, 28/02/2025թ. թիվ 25Ա, 28/02/2025թ. թիվ 26Ա որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողատեսքերը 563 047 (հինգ հարյուր վաթսուներեք հազար քառասունյոթ) ՀՀ դրամով վաճառել քաղաքացի Մխիթար Խաչիկի Վարդանյանին՝

1)Վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0027, մակերեսը՝ 0,54761հա, որից՝ վարելահող 0,34139հա՝ 117 396 ՀՀ դրամ, այլ հողատեսք 0,20622հա՝ 14 615,8425, ընդամենը՝ 132 012 ՀՀ դրամ:

2)Վարելահող, այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0028, մակերեսը՝ 1,32406հա, որից՝ վարելահող 0,62561հա՝ 215 132 ՀՀ դրամ, այլ հողատեսք 0,69845հա 49 503 ՀՀ դրամ, ընդամենը՝ 264 636 ՀՀ դրամ:

3)Այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0109-0009, մակերեսը՝ 0,31հա՝ 21 971 ՀՀ դրամ:

4)Վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0030, մակերեսը՝ 0,42հա՝ 144 428 ՀՀ դրամ:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող

ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ 31 500 (երեսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով վաճառել քաղաքացի Աշոտ Գառնիկի Մուրադյանին՝

1)Այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-035-0247-0027, մակերեսը՝ 0,19556հա:

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ 93 555 (իննսուներեք հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամով վաճառել քաղաքացի Վարդան Աղվանի Աբրահամյանին՝

1)Այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-029-0108-0003, մակերեսը՝ 0,66հա:

4.Անշարժ գույքերը օտարելու համար օրենքով սահմանված ժամկետում և կարգով կնքել օտարման պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 17 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 135 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներն ու Եղեգիս համայնքի ավագանու 05/06/2024թ. թիվ 66Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 27-ը մայիսի 2025թ. N01/06-1-2/3213-2025 (մտից 854) գրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողատեսքերը երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության.

1)Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող 800 (ութ հարյուր) հա մակերեսով պետական սեփականություն հանդիսացող արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Երասխ գյուղի բնակիչ Խդր Ալիի Խուդոյանին:

2)Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող 100 (մեկ հարյուր) հա մակերեսով պետական սեփականություն հանդիսացող արոտը վարձակալության օգտագործման տրամադրել Եղեգնաձոր համայնքի բնակիչ Խաչիկ Վաղարշակի Մարտիրոսյանին:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՍԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 18 ք.Եղեգիս

Տպ. 854

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք.Եղեգնաձոր,Շահումյան 5 Հեռ. (+374281) 2 25 22

«27» «05» 2025թ. N 01/06-1-2/3213-2025

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ գործընկեր,

Հիմք ունենալով ՀՀ կառավարության 2010թվականի 14հունվարի «ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,անհատույց և օգտագործման,վարձակալության կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին»թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և Ձեր՝ 2025թ.-ի մայիսի 21-ի թիվ 606 գրությունը՝ տալիս եմ դրական եզրակացություն, Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված «Ջանի» կոչվող հանդամասում գտնվող ,պետական սեփականություն հանդիսացող, 800 հա և նույն հանդամասում գտնվող 100 հա արոտները վարձակալությամբ տրամադրել՝ համաձայն ՀՀ կառավարության 28.10.2010թ. թիվ 1477-Ն որոշմամբ հաստատված պահանջների:

2025-05-27 10:15:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԴ-ի կողմից

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

Հարգանքով՝

Կատարող՝ քաղաքաշինության,
հողաշինության և ենթակառուցվածքների
կառավարման վարչության հողաշինության
բաժնի ավագ մասնագետ՝ Ա.Մարգարյան
Հեռ.:+374281-23713 hoghashinutyun.vayotsdzor@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 136 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 35-րդ, 58-րդ կետերը, Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10012CUCCE68 ծածկագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Միավորել Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող Շատին գյուղի բնակիչ Վարուժան Սարիբեկի Եղյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերի գործառնական նշանակության ստորև ներկայացված հողամասերը՝

1)կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0143, մակերեսը՝ 0,09696հա,

1)կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0145, մակերեսը՝ 0,0245հա,

2. Միավորված անշարժ գույքին տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 23-րդ փողոց, 1-ին նրբանցքի 1-ին փակուղի, թիվ 1 հասցեն:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՅԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 18 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 137 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքին (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0021-0017, մակերեսը՝ 0,04425հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 4-րդ փողոց, թիվ 8 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Սալլի գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքինն (կադաստրային ծածկագիր՝ 10-038-0019-0012, մակերեսը՝ 0,06158հա) տրամադրել Եղեգիս համայնք, Սալլի գյուղ, 2-րդ փողոց, թիվ 5 հասցեն:

3.Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերի հողատեսքին (կադաստրային ծածկագիր՝ 10-030-0028-0001, մակերեսը՝ 0,06413հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորբատեղ գյուղ, 1-ին փողոց, թիվ 9 հասցեն:

4.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0023-0001, մակերեսը՝ 0,1հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 7-րդ փողոց, թիվ 5 հասցեն:

5.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերի հողատեսքին (կադաստրային ծածկագիր՝ 10-007-0028-0002, մակերեսը՝ 0,67275հա) տրամադրել Եղեգիս համայնք, Աղնջաձոր գյուղ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 1 հասցեն:

6.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողերի հողատեսքին (կադաստրային ծածկագիր՝ 10-041-0005-0001-ից, մակերեսը՝ 0,0299հա) տրամադրել Եղեգիս համայնք, Վարդահովիտ գյուղ, 8-րդ փողոց, թիվ 11/2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հունիսի 18 հ.Եղեգիս